



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐ-
ԺԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ՆՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ:

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Թ. ՅԵԹ. ԻԹ. ՏԱՐԻ.

ՀԱՄԱՐ ԵՐԱՐԱՐԳ

ՓԵՏՐՈՒԱՐ 1896 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ՅԵՇԱՏԱԿԻՆ.

Արդ՝ ո՞վ մեկնեցէ զմեզ ի սիրոյն Հրիս-
տոսի. նեղութիւնն թէ անձկութիւնն, թէ հալա-
ծանք, թէ սո՞վ, թէ մեղկութիւնն, թէ վնշտք,
թէ սո՞ւր:

Հոռմ. Ը. 55:

Յայտմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախ-
տել, ոչ հրեշտակք եւ ոչ մարդիկ, ոչ սո՞ւր, ոչ
հո՞ւր, ոչ ջո՞ւր, ոչ ամենայն զինչ եւ են դառն
հարուածք:

Նղիշէ. Միաբ. Թուղթ:

2 Եզ, ո՞վ պանծալի նախնիք, այս տառա-
պանքի օրերում մեր մարած աչքերը
դէպի ձեզ են դառնում որոնց կուրծքի տակ

այդպէս ուժգնութեամբ արձագանք էր տալիս
առաքելական սուրբ պատգամը. որոնց սրտե-
րում Վրիստոսի սէրն այդ սքանչելի ողե-
րութիւնը ներշնչելի ի մի համաշունչ միա-
բանութիւն ձուլել կարող էր. որոնց հոգին
այդչափ աննկուն՝ այդչափ անդրդուելի էր
հաւատը. Նեղութիւնն և հալածանք և մեր-
կութիւնն վիշտք պաշարել են, աւաղ, ներկայ
սերնդին ևս, նորան ևս սպառնում են սո՞վն ու
սուր. բայց ո՞ւր, ա՛խ, ո՞ւր է այն հաւատը,
որի վերայ հաստատուած՝ նա ևս արհամար-
հէր ամէն սպառնալիք ու դառն հարուած-
ներ. ո՞ւր է այն սէրը, որ անխարդախ մար-

գարտի պէս իւր սեփական փայլն ունի նաև խոր անդունդի յատակում, որ այս ողորմելի վիճակի մէջ իսկ հաւածական ու կարթակոտոր մի ժողովրդի ցիրուցան անդամներին ի մի համայնք համախմբել կարող էր՝ սփռեալ ու յուսալից ներքինների և պատկառելի արտաքինների համար: **Օ**րեղ և փարթամ աշխարհը արհամարհում է նորան, և եթէ շատերի արգահատանաց առարկան է նա այժմ՝ պատճառն աւելի նորա անծայր թշուառութիւնն է, քան սեփական արժանիքը. վերանորոգուել են կարծես այն սև օրերը, երբ ասորուց իսկ վատ հայն էր համարուած, և մե՛նք ... մեր ինքնագիտակցութիւնը մեր ազգային պատուոյ զգացումը ... ո՛ւր ես, ա՛խ, անպարտելիդ **Ա**շահն, ո՛ւր է **Ղ**եոնդների և **Ա**րդանների այն հրաբորբոք հոգին ...

Սակայն մի՞թէ յիշաւի ձեր հարազատ սերունդը չենք մենք, և նոյն անմահական փշեայ պսակը չէ՞, որ այսօր ևս զարդարում է Հայի ծակատը. **Ղ**եոնդի շառաւիղներ չէին մի՞թէ այն մորթեղեր՝ քահանաները, **Ա**շահնի եղբայրներ՝ իրենց մօր գրկում խեղդած կայտառ մանուկները, մի՞թէ մի խումբ ուրացողների և օտարածնունդ ստահակների նենգամիտ արարքը նսեմացնում է հայութեան փառքը և նորա անհամար վերքերից կաթող ծործոր արիւնը պակաս կարմիր, պակաս սուրբ, պակաս բեղմնաւոր է քան, որ երբեմն **Տ**ղմուտի ամբերը ներկեց: **Ա**շխանք աշխարհիս այսօրիկ, այդ փառքը չեն ծանաշում. փիթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք **Ղ**Տէր փառացն ի խաչ հանէին: Քրիստոնեայ կոչուած աշխարհի համար իսկ ոսկու և բեհէզների մէջ ձոխացողն է փառաւոր և պատուական, սրով և հրազինիւք գօտեւորեալը զօրեղ և պատկառելի: **Լ**ւ մինչ, ո՞վ նախնիք, այդ աշխարհը թոյլ է տալիս առանց սոսկալու նախատանօք կշտամբել, նորանոր հարուածներով քարկոծ անել խաչի բեռան տակ ընկած նահատակին, ոտնակոխ արորել, մինչև իւր վերջին շունչը փչէ՝ զուք եղէք մեզ օրինակ և քաջալիր, համբերութեամբ տանելու այդ ծանր

-բեռը, օտարի փառքին նախանձորդ չլինելու: **Լ**նմահ **Ա**րդանանք, ձեր յիշատակը թող զարթեցնէ մեր մէջ որդիական սիրոյ ամենաջերմեանդ զգացումներ և մենք սփռութենք մեր հարազատ մօր խանդակով աչքերից կաթած մի շիթ արցունքն աւելի բարձր գնահատել, քան աշխարհիս բոլոր մարգարիտներն ու զանձերը. կեանքի ու մահուան ասպարիզում ձեզ առաջնորդող խաչի զրօշը թող շարունակէ առաջնորդել և մեզ, այն երկնային իմաստութեամբ լուսաւորուած լինին մեր մաքերը, որ ուսուցանում է ի Տէր միայն պարծիլ. այն անմահական հաւատով ջերմանան մեր սրտերը, որի գէժ անզօր են հրեշտակք և մարդիկ, սուր և հուր, և ջուր, և ամենայն դառն հարուածք:

Կ. Վ.



ԾԱՂԿԱՔԱՂ, ՍՊԷՕՐԶԸՆԻ ՔԱՐՈՂԻՆԵՐԻՅ.

«**Մ**եր ժամանակի քարոզների իշխանն» է կոչուել անգլիական բապտիստների այս հովիւը, որի քարոզներից մէկն իբրև նմուշ տրււած պագրեցիք 1895-ի «Արարատ» թ. 11-ում: Ոչ որ մեր ժամանակակից քարոզիչներից Սպէօր-ջընի պէս չէ ըմբռնել մեր գարու մեղքերն ու թոյլ կողմերը, կարիքներն ու թշուառութիւնները, ձգտումներն ու միտումները, նորա արտաքին փայլն ու նշոյլները, նրա գլխաւոր արժանիքն այն է, որ մեր դարը ճանաչելով՝ կարողացել է այնպէս քարոզել, որպէս ոչ ոք չէր կարողացել: Նա գիտէ մեղքերը կշտամբել, կարիքների բարձման դարմանը գտնել, մոլորեալներին աչք ցոյց տալ և աշխարհիս անցողական փայլից միւս կողմն ուղղել մեր հայեացքները դէպի յաւիտենական արշալոյսը: Նրա քարոզական կորովն ու ազդեցութիւնն այնքան մեծ է, որ ապշեցրել է ամէնքին և արժանացրել «քարոզիչների իշխան» պատուանշան:

Այս ազաշխարութեան օրերին, երբ